Անչ-Փ·, Անչկորա, Անչկորա-Մացրա գե-
ղերը իրենց պարագաներով։ Զիդիլ առուա-
կի վրայ են — Գուդատի եւ Զիդիլ գեղերը։

Արդանուչի վերի բերդը շինուած է մի
բարձր ապառաժի կատարին, որը աւանից
աւելի քան 70 մետր բարձրութիւն ունի,
սրակող եւ անմերձենալի է։ Վերի բերդը
շուրջը պարիսպ եւ որմ ունի, չորս կողմից
անմատչելի է· իր մէջ կան այսօր էլ դղեա-
կի, զօրանոցի, տաճարի, աւազանի, նոյն
իսկ պարտիզի մնացորդներ, որտեղից 1873
թ· թուղ եւ նուռ եմ քաղել։ Ինչպէս վերի
բերդը աւանից բարձր է, այնպէս էլ աւանը
աւելի քան 100 մետր բարձր է առուակի ըն-
թացքից — Զէհէննէմ-Դերէից, պատած է
պարսպով, անառիկ է չորս կողմից, սոս-
կալի դարիվերով ջաղացներից եւ Էշկինարի
ձորից բարձրանում են։

1587 թ· Պոլսից յատուկ Բերաթով
«Պոտի փաշենց» տոհմը, որպէս վասալ եւ
վարիչ տիրել է բերդին եւ շրջակայքին։
Որովհետեւ վրէժխնդրական ատելութեամբ
լարուած էին Արդվինի Բէկերի ընտանիքի
դէմ, ժառանգորդը 20—25 տարուան հասա-
կում ընդհարուել է հակառակորդների հետ
եւ սպանուել։ Այդ պատճառով այրիները
շարունակել են բերդին իշխել, մինչեւ որ-
դու չափահաս դառնալը։ Այսպէս այս տոհ-
մի երիտասարդները ոխակալուած՝ ընդհա-
րուել են Արդվինի Բէկերի հետ եւ մեռել·
այրիները կառավարել են երկիրը եւ նրանց